ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2024-2025 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ

ՆԻՍՏԵՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **24. 08. 2024թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 23-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1.ԳՊՀ 2023-2024 ուստարվա շրջանավարտների կողմից ամփոփիչ ատեստավորման գործընթացի կազմակերպման, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքի գնահատման արդյունքների ներկայացում և քննարկում:

/զեկուցող՝ ԳՊՀ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

2.2024-2025 ուստարում ԳՊՀ աշխատանքների կազմակերպման, առաջին կիսամյակի դասընթացների և քննաշրջանի անցկացման, երկրորդ կիսամյակի մեկնարկի ժամանակացույցների քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

3.ԳՊՀ ֆակուլտետների առկա բաժիններում 2024-2025 ուստարվա ուսումնական գործընթացի և հեռակա բաժիններում քննաշրջանի նախապատրաստման մասին

/զեկուցողներ՝ ԳՊՀ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

4.2023-2024 ուստարվա ակադեմիական առաջադիմության արդյունքներով վճարովի և անվճար հիմունքներով սովորող ուսանողների փոխատեղման վերաբերյալ /զեկուցողներ՝ ԳՊՀ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան, ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

5. ԳՊՀ դասախոսների 2024-2025 ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածության ձևավորման մասին:

/զեկուցողներ՝ ԳՊՀ պրոռեկտոր, դեկաններ, ամբիոնների վարիչներ/

6.ԳՊՀ էկոլոգիայի, կենսաբանության և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Սամվելի Ավետիսյանին շնորհակալագիր հանձնելու հարցը:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

7. ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Ալբերտ Դարբինյանին առցանց դասավանդելու թույլտվություն տալու հարցը:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

8.Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանի զեկուցումը 2023-2024 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի՝ շրջանավարտների կողմից գնահատման արդյունքների մասին: Զեկուցողը նշեց, որ այսպիսի հարցումները անցկացվում են պարբերաբար և նպատակ ունեն բարելավելու ամփոփիչ ատեստավորման գործընթացի հետ կապված կազմակերպչական աշխատանքները, բարձրացնել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման որակը, քննարկել և հաշվի առնել հանձնաժողովների արած դիտարկումները: Շրջանավարտների շրջանում անցկացվող հարցումները լավագույնս բացահայտում են ատեստավորման գործընթացի դրական կողմերն ու թերությունները:

Ք. Հայրապետյանը նշեց, որ հարցման մասնակիցների թիվը կազմում է շրջանավարտների մոտ 60 տոկոսը: Տրված պատասխանները՝ գործընթացների կազմակերպման և անցկացման վերաբերյալ հիմնականում դրական են: Զեկուցողը անդրադարձավ նաև հանձնաժողովների անդամների արտահայտած կարծիքներին: Նրանք հիմնականում բարձր են գնահատել ներկայացված աշխատանքների կատարման և ներկայացման որակը՝ նշելով նաև որոշ թերություններ, որոնք էական նշանակություն չեն ունեցել:

Շրջանավարտներն արտահայտել են նաև իրենց դիտարկումներն ու ցանկությունները ուսումնական գործընթացի, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման վերաբերյալ:

Ներկայացված հարցումների շուրջ արտահայտվեցին ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը, պրոռեկտոր Ն. Կուտուզյանը, հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Հ. Ղաջոյանը:

Հիմք ընդունելով զեկուցումը, քննարկման ընթացքում արտահայտված կարծիքները՝ գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ- 1.Ք. Հայրապետյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

2. Շրջանավարտների շրջանում անցկացված հարցումների արդյունքները քննարկել ամբիոններում և ձեռնարկել գործընթացի բարելավման միջոցառումներ:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը 2024-2025 ուստարում ԳՊՀ աշխատանքների կազմակերպման գործընթացի մասին: Զեկուցողը նշեց, որ նոր՝ 2024-2025 ուստարին որոշակիորեն տարբերվում է նախորդ ուսումնական տարիներից՝ պայմանավորված ֆակուլտետների միավորմամբ, առարկայացանկի և ժամաքանակների բարելավմամբ, անհատական աշխատանքները ինքնուրույն աշխատանքներով փոխարինմամբ և այլն: Բնականաբար ուսումնական գործընթացը բարեհաջող կազմակերպելու և անցկացնելու համար շատ կարևոր է նախապատրաստական աշխատանքներն իրականացնել արդյունավետ և նպատակային: Ն. Կուտուզյանը ներկայացրեց առաջին կիսամյակի դասընթացների և քննաշրջանի անցկացման, երկրորդ կիսամյակի մեկնարկի ժամանակացույցները՝ նշելով, որ դրանք հղվել են դեկանատներ և ամբիոններ, քննարկվել են և ընդունվել: Դիտողություններ չեն եղել: Առաջարկվեց ներկայացված ժամանակացույցները հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ – 1.Հիմք ընդունելով Ն. Կուտուզյանի զեկուցումը, ներկայացրած պարզաբանումները՝ հաստատել առաջին կիսամյակի դասընթացների և քննաշրջանի անցկացման, երկրորդ կիսամյակի մեկնարկի ժամանակացույցները:
2.Հանձնարարել ԳՊՀ ակադեմիական քաղաքականության բաժնին՝ հաստատված ժամանակացույցները հղել դեկանատներ և ամբիոններ՝ ի կատարումն:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ ԲՏՖ դեկան Մ. Ավագյանի և ՀՄՖ դեկան Թ. Ասոյանի զեկուցումները 2024-2025 ուստարվա ուսումնական գործընթացի և հեռակա բաժիններում քննաշրջանի նախապատրաստման մասին: Զեկուցողները նշեցին, որ արդեն նախապատրաստական աշխատանքներ են տարվում ուսումնական գործընթացը պատշաճ կերպով սկսելու համար:

ՈՐՈՇԵՑԻՆ – ԲՏՖ դեկան Մ. Ավագյանի և ՀՄՖ դեկան Թ. Ասոյանի զեկուցումներն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ- ԲՏՖ դեկան Մ. Ավագյանի և ՀՄՖ դեկան Թ. Ասոյանի զեկուցումները 2023-2024 ուստարվա ակադեմիական առաջադիմության արդյունքներով ուսանողների փոխատեղման վերաբերյալ: Զեկուցողները նշեցին, որ վճարովի և անվճար հիմունքներով սովորող ուսանողների փոխատեղման հետ կապված հաշվարկներն արդեն գրեթե ավարտված են, սակայն դա մանրակրկիտ մոտեցում և կրկնակի ստուգում է պահանջում: Այդ տեսակետից դեկանատները համագործակցում են ակադեմիական քաղաքականության բաժնի հետ, որտեղ վերանայվում են կատարված հաշվարկները՝ սխալներից խուսափելու նպատակով: Հաշվարկները ցույց են տալիս, որ ուսանողների ակադեմիական առաջադիմությամբ պայմանավորված՝ տեղի են ունենալու փոփոխություններ: Փոխատեղման հետ կապված աշխատանքներն իրականացվում են մասնակցային և թափանցիկ կերպով:

ՈՐՈՇԵՑԻՆ – 2023-2024 ուստարվա ակադեմիական առաջադիմության արդյունքներով ուսանողների փոխատեղման վերաբերյալ ԲՏՖ դեկան Մ. Ավագյանի և ՀՄՖ դեկան Թ. Ասոյանի զեկուցումներն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ դասախոսների 2024-2025 ուստարվա ուսումնական ծանրաբեռնվածության ձևավորման մասին Ն. Կուտուզյանի, դեկանների և ամբիոնների վարիչների հաղորդումները: Նրանք նշեցին, որ նոր ուսումնական տարին աչքի է ընկնում որոշակի յուրահատկություններով: Մասնավորապես ծավալուն աշխատանքներ են տարվել առարկայացանկերի, կրթական ծրագրերի, ժամաքանակների որոշման ուղղությամբ, ընդ որում այդ գործընթացում իրենց մասնակցությունն են ունեցել դասախոսները, որոնք շատ օգտակար առաջարկություններ են արել: Նախապես նրանք տեղեկացվել են կատարված փոփոխությունների մասին, ներկայացրել են իրենց դիտարկումները, որոնց մեծ մասը ընդունվել է: Կատարված լայնածավալ աշխատանքների շնորհիվ արդեն ձևավորվում են դասախոսների ծանրաբեռնվածությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ներկայացված զեկուցումներն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ- Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ էկոլոգիայի, կենսաբանության և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Սամվելի Ավետիսյանին շնորհակալագիր հանձնելու մասին: Զեկուցողը ներկայացրեց Գավառի պետական համալսարանում նրա կատարած բեղմնավոր և արդյունավետ աշխատանքի հետագիծը: Նշեց, որ նա ամենայն պատասխանատվությամբ է վերաբերվել իր գործին, վայելել է ուսանողների և գործընկերների սերն ու հարգանքը: Նա ավարտում է աշխատանքը համալսարանում և նրա ջանադիր գիտամանկավարժական գործունեությունը արժանի է ամենայն հարգանքի և բարձր գնահատականի:

Ելույթ ունեցավ ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը, բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանը, որոնք բարձր գնահատեցին նրանց ավանդը Գավառի պետական համալսարանի գիտական և ուսումնադաստիարակչական գործունեության մեջ:

Հիմք ընդունելով զեկուցումը և ելույթները՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇԵՑ- Շնորհակալագիր հանձնել ԳՊՀ էկոլոգիայի, կենսաբանության և առողջ ապրելակերպի ամբիոնի դասախոս, կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Կարինե Սամվելի Ավետիսյանին՝ բարձր գնահատելով նրա ավանդն ու ներդրումը Գավառի պետական համալսարանի զարգացման և երիտասարդ սերնդի դաստիարակության գործում:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս Ալբերտ Դարբինյանին առցանց դասավանդելու թույլտվություն տալու մասին: Նա նշեց, որ հարցի վերաբերյալ առկա են բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի և

ֆակուլտետի խորհրդի նիստերի որոշումները, որոնցով առաջարկվում է Ա.Դարբինյանին առցանց դասավանդելու թույլտվություն տալ՝ պայմանավարված աշխատանքային ծանրաբեռնվածությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հիմք ընդունելով բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի և ֆակուլտետի խորհրդի նիստերի որոշումները՝ Ալբերտ Սարգսի Դարբինյանին թույլ տալ դասերն անցկացնել առցանց ձևաչափով:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ- ում առկա ընթացիկ հարցերի մասին:

Քննարկվեցին ԳՊՀ հանրակացարանում բնակվելու համար նախատեսված վարձավճարի չափի հարցը, ԳՊՀ ստորաբաժանումների հաշվետվությունների ժամանակացույցը, դասախոսների առարկայական ծրագրերի արդիականացման և վերանայման հարցը, ԱՊՀ երկրների կրթության ոլորտի աշխատողների, ուսուցիչների՝ Երևանում անցկացվելիք աշխատաժողովի հետ կապված հարցը, ուսանողների ինքնուրույն աշխատանքի, գիտական հոդվածների երաշխավորագրերի հարցը:

Նշված հարցերի շուրջ արտահայտվեցին և պարզաբանումներ ներկայացրին ռեկտոր Ռ. Հակոբյանը, պրոռեկտոր Ն. Կուտուզյանը, դեկաններ Մ. Ավագյանը, Թ. Ասոյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. ԳՊՀ հանրակացարանում բնակվելու համար նախատեսված վարձավճարի չափը թողնել անփոփոխ՝ 25000 դրամ:

2.Հաստատել ԳՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների հաշվետվությունների ժամանակացույցը:

3.Հանձնարարել դասախոսներին՝ վերանայել և արդիականացնել առարկայական ծրագրերը:

4. Հանձնարարել ԳՊՀ ամբիոններին՝ ապահովել ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածուի 17-րդ պրակի համար նախատեսված հոդվածների գրախոսման և տպագրության երաշխավորելու գործընթացների իրականացումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **14. 09. 2024թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 22-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1.ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ:

/զեկուցող՝ ԳՊՀ ԲՏՖ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչի պարտականությունները կատարող Մ. Ավագյան/

2.ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ:

/զեկուցող՝ ԳՊՀ ԲՏՖ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վ. Ավետիսյան/

3.ԳՊՀ առկա բաժինների ուսանողների կողմից 2023-2024 ուստարվա դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման արդյունքների մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

4.Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ- ԲՏՖ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչի պարտականությունները կատարող Մ. Ավագյանի զեկուցումը ամբիոնի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների մասին: Զեկուցողը ներկայացրեց ընդունելության արդյունքները, ուսանողական համակազմում տեղի ունեցած տեղաշարժերը, ուսումնական պլանում, առարկայական ծրագրերում կատարված փոփոխություններն ու թարմացումները: Ամբիոնում կատարվել է գիտահետազոտական աշխատանք, որի արդյունքում տպագրվել է 16 հոդված, գրանցվել է գյուտի մեկ արտոնագիր: Նշվեց, որ մեծ ուշադրություն է դարձվել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարմանը,

ամփոփիչ ատեստավորման կազմակերպմանն ու անցկացմանը: Արդյունքների ամփոփումը ցույց է տվել, որ ուսանողները ցուցաբերել են բարձր պատրաստվածություն ու գիտելիքների բարձր մակարդակ: Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահներն ու անդամները դրական կարծիքներ են արտահայտել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման և պաշտպանության մասին: Նրանց կողմից առաջարկվել է օտարալեզու մասնագիտական գրականության ուսումնասիրության, ուսանողների ինքնուրույնության մակարդակի բարձրացման վրա:

Ամբիոնի գործունեության հաշվետվությունը ներկայացնելուց հետո Մ. Ավագյանը անդրադարձավ 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին: Կատարվել է գործող ՄԿԾ-ների մշտադիտարկում և աշխատանքներ են տարվել նոր ուսումնական տարվա ուսումնական պլանների կազմման ուղղությամբ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.ԳՊՀ ԲՏՖ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչի պարտականությունները կատարող Մ. Ավագյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ ԲՏՖ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին:

ԼՍԵՑԻՆ- ԲՏՖ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վ. Ավետիսյանի զեկուցումը ամբիոնի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների մասին: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց ամբիոնի կատարած աշխատանքներն ըստ զարգացման առանձին ուղղությունների: Վերլուծվեցին ուսանողական համակազմի տեղաշարժերը, առաջադիմության, ուսանողների հետ տարվող աշխատանքների, կրթական ծրագրերի լրամշակման, ամփոփիչ ատեստավորման և այլ գործընթացների հետ կապված հարցերը:

Վ. Ավետիսյանը ներկայացրեց ամբիոնի 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.ԳՊՀ ԲՏՖ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ ՎԱվետիսյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ ԲՏՖ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանի զեկուցումը առկա բաժինների ուսանողների կողմից 2023-2024 ուստարվա դասավանդման որակի և ուսումնական

գործընթացի արդյունավետության գնահատման արդյունքների մասին: Զեկուցողը նշեց, որ ուսանողության շրջանում անանուն հարցումներն անցկացվել են նախապես մշակված հարցաշարով: Հարցումներին մասնակցել են առկա բաժինների ուսանողների մեծ մասը: Հարցումների վերլուծությունը ցույց է տվել, որ ուսանողները բարձր են գնահատել Գավառի պետական համալսարանում դասավանդման որակը, դրական են արձագանքել ուսումնական գործընթացի արդյունավետությանը վերաբերող հարցերին: Ուսանողների կողմից արվել են դիտարկումներ, ներկայացվել են առաջարկություններ՝ դասավանդման որակն ու ուսումնական գործընթացի արդյունավետությունը առավել բարձրացնելու նպատակով:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանի զեկուցումն ընդունել ի գիտություն: 2. Ուսանողների կողմից 2023-2024 ուստարվա դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման արդյունքները հղել ամբիոններին և դեկանատներին՝ քննարկելու և նկատված թերությունները վերացնելու միջոցառումներ իրականացնելու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**
Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **05. 10. 2024թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ:

/զեկուցող՝ ՀՄՖ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյան/

2.21T-6B038 ծածկագրով «Եվրոպական էպիկական ավանդույթը և ‹‹Սասնա ծռեր» էպոսը» գիտական թեմայի կատարման վերաբերյալ ամփոփիչ հաշվետվության ներկայացում:

/զեկուցողներ՝ ՀՄՖ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյան, գլխ. հաշվապահ Գ.Մուրադյան/

3.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի օտար լեզվի և գրականության ամբիոնի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ:

/զեկուցող՝ ՀՄՖ օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Գ. Միրիբյան/

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ- ՀՄՖ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյանի զեկուցումը 2023-2024 ուսումնական տարվա գործունեության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց ամբիոնի կատարած աշխատանքներն ըստ առանձին ուղղությունների: Վերլուծվեցին ուսանողական համակազմի տեղաշարժերը, առաջադիմության, ուսանողների հետ տարվող աշխատանքների, կրթական ծրագրերի լրամշակման, ամփոփիչ ատեստավորման և այլ գործընթացների հետ կապված հարցերը: Բերվում էին համապատասխան թվային տվյալներ: Զեկուցողը կարևորեց ամբիոնում իրականացված գիտահետազոտական

աշխատանքները: 2023-2024 ուսումնական տարում հրատարակվել են 1-ական դասագիրք, մենագրություն և նյութերի ժողովածու, 2 զեկուցումների թեզիս, 29 հոդված: Այս առումով շատ է կարևորվում ուսանողների հետ համագործակցությունը, որի արդյունքում տարբեր ուսանողական գիտաժողովներում զեկուցումներով հանդես են գալիս հայոց լեզվի և գրականության բաժնի ուսանողները, հաղթում են հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթում:

Վ. Գրիգորյանը ներկայացրեց ամբիոնի 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.ԳՊՀ ՀՄՖ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ հայոց լեզվի և գրականության ամբիոնի 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին:

ԼՍԵՑԻՆ ՀՄՖ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյանի ամփոփիչ հաշվետվությունը 21T-6B038 ծածկագրով «Եվրոպական էպիկական ավանդույթը և ‹‹Սասնա ծռեր» էպոսը» գիտական թեմայի կատարման վերաբերյալ: ՎԳրիգորյանն ասաց, որ գիտական թեմայի կատարումն իրականացվել է ըստ նախապես մշակված աշխատանքային պլանի: Այնուհետև զեկուցողը կատարված աշխատանքները ներկայացրեց ըստ ժամանակային որոշակի բաժանումների: Ուսումնասիրվել են եվրոպական ժողովուրդների հետհոռոմեական շրջանի պատմամշակութային կացությունը, մի շարք պատմագիտական հիմնարար աշխատություններ, եվրոպական հնագույն ժողովուրդների պատմությունն ու մշակույթը, տեսական գրականությունը: Կատարվել են հետազոտություններ ինչպես «Եվրոպական արխաիկ էպոսը. պատմություն և պոետիկա» թեմայի, այնպես էլ դասական էպոսի շրջանակներում: Թեմայի իրականացման ընթացքում կատարված աշխատանքները հիմնականում վերաբերել են «Սասնա ծռեր» էպոսի և համաշխարհային էպիկական փորձի միջև եղած գիտական զուգահեռներին, լուսաբանվել են հայկական էպոսի համամարդկային և համազգային խնդիրներն ու աշխարհայացքային, հոգեբանական առանձնահատկությունները:

Ծրագրի շրջանակներում 2023-ի հունիսի 10-11-ը Գավառի պետական համլսարանում տեղի է ունեցել միջազգային գիտաժողով, որի ընթացքում ներկայացված զեկուցումները տպագրվել են «Բանահյուսություն և գրականություն» միջազգային գիտաժողովի նյութերն ամփոփող ժողովածուում: Ծրագրի ավարտին հայ և եվրոպական հայտնի հետազոտողների գիտական փորձը, ինչպես նաև սեփական հետազոտությունների արդյունքները ամբողջացվել են **«Եվրոպական էպիկական ավանդույթը և «Սասնա ծռեր» էպոսը»** (2024) մենագրության մեջ (425 էջ):

Զեկուցման ավարտին Վ.Գրիգորյանը պարզաբանումներ ներկայացրեց թեմայի արդիականության և նորույթի վերաբերյալ՝ նշելով, որ ամբողջ ուսումնասիրությունը եռամիասնության, այսինքն՝ դիցաբանության, պատմության և էպիկական պոեզիայի միասնության մեջ տեսնելու նոր փորձ է։

Իբրև համազեկուցող՝ ծրագրի կատարման ընթացքում իրականացված ֆինանսական գործառնությունների **հաշվետվությամբ հանդես եկավ ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանը:** Նա նշեց, որ ծրագրի իրականացման համար նախատեսված ֆինանսական բյուջեն կատարվել է ըստ նախապես մշակված ծրագրի. ֆինանսական միջոցները բաշխվել և ծախսվել են նպատակային, ֆինանսական խնդիրներ չեն առաջացել:

Արտահայտվեցին ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանը, հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի դեկան Թ. Ասոյանը: Նրանք նշեցին, որ «Եվրոպական էպիկական ավանդույթը և ‹‹Սասնա ծռեր» էպոսը» գիտական թեման իրականացվել է բարձր մակարդակով թե՛ բովանդակային, թե՛ ֆինանսական, թե՛ կազմակերպչական առումներով, որոնց շնորհիվ այժմ հրապարակի վրա է մի մենագրություն, որը նախանշում է հայացքների, մոտեցումների նոր ուղիներ հայոց հերոսական էպոսի հետագա ուսումնասիրության գործընթացում:

Հիմք ընդունելով զեկուցումներն ու արտահայտված կարծիքները՝ գիտխորհուրդը

ՈՐՈՇԵՑ՝ 1. ՀՄՖ հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վ. Գրիգորյանի ամփոփիչ հաշվետվությունը և ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանի ֆինանսական հաշվետվությունը ընդունել ի գիտություն, 21T-6B038 ծածկագրով «Եվրոպական էպիկական ավանդույթը և ‹‹Սասնա ծռեր» էպոսը» գիտական թեմայի կատարման աշխատանքները գնահատել բավարար:

2. ԳՊՀ գիտական խորհրդի որոշումը ներկայացնել Բարձրագույն կրթության և գիտության կոմիտե:

ԼՍԵՑԻՆ- ՀՄՖ օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Գ. Միրիբյան զեկուցումը 2023-2024 ուսումնական տարվա գործունեության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց ամբիոնի կատարած աշխատանքներն ըստ առանձին ուղղությունների: Վերլուծվեցին ուսանողական համակազմի տեղաշարժերը, առաջադիմության, ուսանողների հետ տարվող աշխատանքների, կրթական ծրագրերի լրամշակման, ամփոփիչ ատեստավորման և այլ գործընթացների հետ կապված հարցերը: Բերվում էին համապատասխան թվային տվյալներ: Հատուկ ուշադրություն դարձվեց թե՛ դասախոսների, թե՛ ուսանողների՝ միջազգային շարժունության ծրագրերին մասնակցելու հանգամանքի վրա:

Զեկուցողը կարևորեց ամբիոնում իրականացված գիտահետազոտական աշխատանքները: 2023-2024 ուսումնական տարում հրատարակվել է 9 հոդված:Այս առումով շատ է կարևորվում ուսանողների հետ համագործակցությունը, որի արդյունքում տարբեր ուսանողական գիտաժողովներում զեկուցումներով հանդես են գալիս օտար լեզվի և գրականության բաժնի ուսանողները, հաղթում են հանրապետական «Լավագույն ուսանող» մրցույթում:

Գ.Միրիբյանը ներկայացրեց ամբիոնի 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.ԳՊՀ ՀՄՖ օտար լեզվի և գրականության ամբիոնի վարիչ Վ. Գրիգորյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ օտար լեզվի և գրականության ամբիոնի 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի կառավարման և ֆինանսների ամբիոնի դասախոս Հայկ Ադիլխանյանին առցանց դասավանդելու թույլտվություն տալու մասին: Նա նշեց, որ Հ. Ադիլխանյանը դիմում է ներկայացրել առցանց դասավանդելու թույլտվություն ստանալու մասին՝ դա հիմնավորելով ԵՊՀ-ում իր աշխատանքային խիստ ծանրաբեռնվածությամբ: Դիմումին սահմանված կարգով ընթացք է տրվել: Հարցը քննարկվել է կառավարման և ֆինանսների ամբիոնում, ապա ֆակուլտետի խորհրդում, առկա են ամբիոնի և ֆակուլտետի խորհրդի նիստերի դրական որոշումները, որոնք հիմք ընդունելով՝ միջնորդություն է ներկայացվել ԳՊՀ գիտխորհրդին՝ Հ. Ադիլխանյանին մագիստրատուրայի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ», «Հաշվապահական հաշվառում (ըստ ոլորտների)», «Տնտեսագիտություն» մասնագիտությունների երկրորդ կուրսերում «Էկոնոմետրիկա» դասընթացը առցանց դասավանդելու թույլտվություն տալու համար:

Արտահայտվեցին ԲՏՖ դեկան Մ.Ավագյանը, դեկանի տեղակալ Մ.Գարեյանը, ամբիոնի վարիչ Ս.Ամիրխանյանը, դասախոսներ Մ.Հերգնյանը, Գ.Խաչատրյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հիմք ընդունելով ‹‹Գավառի պետական համալսարանում հեռավար (առցանց) կրթության կազմակերպման կարգ››-ի 3-րդ կետի և 5-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջները, բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի «Կառավարում և ֆինանսներ» ամբիոնի և ֆակուլտետի խորհրդի նիստերի որոշումները, հաշվի առնելով Հ.Ադիլխանյանի մասնագիտական ու մանկավարժական բարձր որակները՝ բավարարել միջնորդությունը և Հ.Ադիլխանյանին մագիստրատուրայի «Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ» «Հաշվապահական հաշվառում (ըստ ոլորտների)», «Տնտեսագիտություն»

մասնագիտությունների երկրորդ կուրսերում «Էկոնոմետրիկա» դասընթացը առցանց դասավանդելու թույլտվություն տալ:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**
Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **02. 11. 2024թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1.ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ:

/զեկուցող՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան/

2.ԳՊՀ ենթակառուցվածքային հավատարմագրման միջնաժամկետ հաշվետվության ներկայացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան, կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ/

3. Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ- ԲՏՖ դեկան Մ. Ավագյանի զեկուցումը բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Առաջին կիսամյակի տվյալները ներկայացվեցին ըստ բնագիտական և տնտեսագիտական ֆակուլտետների՝ որպես առանձին կառուցվածքային միավորների մինչև 2-րդ կիսամյակում դրանց վերակազմակերպումը իբրև բնագիտատնտեսագիտական ֆակուլտետ: Երկրորդ կիսամյակի տվյալները ներկայացվեցին որպես ձևավորված նոր՝ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի գործունեության արդյունքներ:

Զեկուցողը նախ անդրադարձավ ընդունելությանը և ուսանողական համակազմին առնչվող հարցերին: Ֆակուլտետը 2-րդ կիսամյակի սկզբին ունեցել է 314 ուսանող, որից բակալավր՝ 288, մագիստրոս՝ 26: Առաջադիմությունը կազմել է համապատասխանաբար 82,67 և 44, 44 տոկոս: Ամբիոնների կողմից իրականացվել են կրթական ծրագրերի մշտադիտարկում, բարեփոխումներ, ուշադրության կենտրոնում են եղել որոկի ապահովման գործընթացները: Որակի ապահովման ցուցանիշ են պրոֆեսորոդասախոսական կազմի մասնակցությունը գիտաժողովներին, վերապատրաստումներին, ընդհանուր առմամբ տպագրվել են 35

գիտական հոդվածներ, ուսումնամեթոդական 3 ձեռնարկ, 1 մենագրություն: Հոդվածներ են հրատարակվել ուսանողների համահեղինակությամբ: Բարեհաջող է ընթացել ատեստավորման գործընթացը: Ապահովվել է 100%-անոց արդյունք: Ատեստավորող հանձնաժողովների նախագահներն ու անդամները բարձր են գնահատել ուսանողների պատրաստվածությունը, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման և ներկայացման մակարդակը:

Զեկուցողը կարևորեց բուհ-դպրոց համագործակցային կապերը, միջազգային շարժունության ծրագրերին դասախոսների և ուսանողների մասնակցությունը:

Մ.Ավագյանը ներկայացրեց նաև բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի՝ 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ-1.ԳՊՀ ԲՏ ֆակուլտետի դեկան Մ.Ավագյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի՝ 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ ենթակառուցվածքային հավատարմագրման միջնաժամկետ հաշվետվության ներկայացման ուղղությամբ կատարված աշխատանքների վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ որոշակի աշխատանքներ կատարվել են, որոնց վերաբերյալ պետք է հաշվետվություններ ներկայացվեն համապատասխան ստորաբաժանումների կողմից: Ստեղծվել է բարելավման ծրագիր, մշակվել է գործողությունների պլան: Աշխատանքները արդյունավետ իրականացնելու նպատակով 10 չափանիշները բաշխվել են ըստ ստորաբաժանումների և արդեն ստացվել են մշակված տարբերակները: Այնուամենայնիվ, կան թերություններ, որոնք անհրաժեշտ է վերացնել:

Այնուհետև Ն.Կուտուզյանն անդրադարձավ ներքին աուդիտ անցկացնելու հետ կապված հարցերին՝ առաջարկելով այն իրականացնել արտաքին մասնակիցների միջոցով:

Հարցի շուրջ արտահայտվեցին նաև կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

ՆԿուտուզյանը ներկայացրեց նաև հեռակայի ժամանակացույցը, նշելով, որ այն քննարկվել է դեկանատներում և ամբիոններում, հաշվի են առնվել արտահայտված կարծիքները: Նա առաջարկեց հաստատել ժամանակացույցը:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

2. Հաստատել հեռակայի ժամանակացույցը:

ԼՍԵՑԻՆ – ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ.Մուրադյանի զեկուցումը Գավառի պետական համալսարանի 2025/2026 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունների ներկայացման, ուսման վարձաչափերի քննարկման և

հաստատման մասին: Զեկուցողը հանգամանորեն ներկայացրեց մասնագիտությունները և դրանց համար նախատեսված վարձաչափերը:

Ա. 2025/2026 ուսումնական տարվա առկա ուսուցման ընդունելության բակալավրիատի կրթական ծրագրի մասնագիտությունները և ուսման վարձաչափերը

Դասիչ	**Մասնագիտությունը**	**Ուսման վարձը՝ հազար ՀՀ դրամ**
1	**2**	**3**
011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն		
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	460
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն		
011401.01.6	Կենսաբանություն	430
011401.03.6	Աշխարհագրություն	430
011401.18.6	Պատմություն	430
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	440
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	430
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	540
041101.00.6 Հաշվապահական հաշվառում և հարկում		
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	550
041201.00.6 Ֆինանսներ		
041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	550
031101.00.6 Տնտեսագիտություն		
031101.01.6	Տնտեսագիտություն	550
052201.00.6 Բնապահպանություն և բնօգտագործում		
052201.01.6	Բնապահպանություն և բնօգտագործում	430
042101.00.6 Իրավագիտություն		
042101.01.6	Իրավագիտություն	580
053101.00.6 Քիմիա		
053101.02.6	Դեղագործական քիմիա	430

054201.00.6 Աշխարհագրություն		
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ	430
061103.00.6 Համակարգչային ճարտարագիտություն		
061103.01.6	Համակարգչային ճարտարագիտություն	540
101801.00.6 Սերվիս		
101801.01.6	Սերվիս	450

Բ. 2025/2026 ուսումնական տարվա հեռակա ուսուցման ընդունելության բակալավրիատի կրթական ծրագրի մասնագիտությունները և ուսման վարձաչափերը

Դասիչ	Մասնագիտությունը	Ուսման վարձը՝ հազար ՀՀ դրամ
1	2	3
011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն		
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	440
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն		
011401.01.6	Կենսաբանություն	400
011401.03.6	Աշխարհագրություն	400
011401.18.6	Պատմություն	400
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	400
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	400
041101.00.6 Հաշվապահական հաշվառում և հարկում		
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	500
052201.00.6 Բնապահպանություն և բնօգտագործում		
052201.01.6	Բնապահպանություն և բնօգտագործում	400
042101.00.6 Իրավագիտություն		
042101.01.6	Իրավագիտություն	520
053101.00.6 Քիմիա		
053101.02.6	Դեղագործական քիմիա	420

054201.00.6 Աշխարհագրություն		
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ	420
061103.00.6 Համակարգչային ճարտարագիտություն		
061103.01.6	Համակարգչային ճարտարագիտություն	440
101801.00.6 Սերվիս		
101801.01.6	Սերվիս	420

Գ. 2025/2026 ուսումնական տարվա առկա ուսուցման ընդունելության մագիստրոսի կրթական ծրագրի մասնագիտությունները և ուսման վարձաչափերը

Դասիչ	**Մասնագիտությունը**	***Ուսման վարձը*** **՝հազար ՀՀ դրամ**
1	2	3
011301.00.7 *Ընդհանուր մանկավարժություն*		
011301.01.7	*Տարրական մանկավարժություն և մեթոդիկա*	480
011401.00.7 Մասնագիտական *մանկավարժություն*		
011401.01.7	*Կենսաբանություն*	460
011401.03.7	*Աշխարհագրություն*	460
011401.18.7	*Պատմություն*	460
011401.19.7	*Հայոց լեզու և գրականություն*	460
011401.20.7	*Ռուսաց լեզու և գրականություն*	460
011401.21.7	*Անգլերեն լեզու և գրականություն*	560
041101.00.7 ***Հաշվապահական հաշվառում և հարկում***		
041101.01.7	*Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/*	580
041201.00.7 *Ֆինանսներ*		
041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	580
031101.00.7 Տնտեսագիտություն		
031101.01.7	Տնտեսագիտություն	580
042101.00.7 *Իրավագիտություն*		

042101.01.7	*Իրավագիտություն*	700
061103.00.7 *Համակարգչային ճարտարագիտություն*		
061103.01.7	*Համակարգչային ճարտարագիտություն*	570
052201.00.7 *Բնապահպանություն և բնօգտագործում*		
052201.01.7	*Բնապահպանություն և բնօգտագործում*	*460*

ՈՐՈՇԵՑԻՆ – Հաստատել Գավառի պետական համալսարանի 2025/2026 ուսումնական տարվա ընդունելության մասնագիտությունները և ուսման վարձաչափերը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**
Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **09. 11. 2024թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 22-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ:

/զեկուցող՝ ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

2. ԳՊՀ ուսանողների պրակտիկաների կազմակերպման ընթացքի և արդյունավետության վերաբերյալ հարցման արդյունքների մասին

/զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

3.ԳՊՀ մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի անցկացման ուղղությամբ կատարված աշխատանքների և ժամանակացույցի վերաբերյալ :

/զեկուցող՝ ԳՊՀ ուս.գիտ. գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

4.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ- ՀՄՖ դեկան Թ. Ասոյանի զեկուցումը ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Զեկուցողն ասաց, որ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում հաշվետու ժամանակահատվածում ուսումնական գործընթացն իրականացվել է ըստ ԳՊՀ զարգացման գերակա ոլորտների: Հաշվետվությունն էլ ներկայացվեց ըստ այդ ոլորտների: Կրթական և սոցիալ-մշակութային գործունեության ոլորտի աշխատանքները ներկայացնելիս նախ անդրադարձ կատարվեց ընդունելությանը և ուսանողների շարժին: Ներկայացվեց ուսանողների ակադեմիական առաջադիմության ցուանիշներն ինչպես տարեկան, այնպես էլ ըստ կիսամյակների: Ամփոփիչ ատեստավորումն անցկացվել է սահմանված կարգի համաձայն: Նախատեսված ժամկետներում ավարտին են հասցվել ավարտական աշխատանքները և մագիստրոսական թեզերը: Հանձնաժողովների նախագահները դրական կարծիքներ են արտահայտել թեմաների ընտրության, դրանց կատարման և պատշաճ ներկայացման վերաբերյալ: Արդյունավետ աշխատանքներ են տարվել գիտահետազոտական և նորարական գործունեության ոլորտներում: Պրոֆեսորադասախոսական անձնակազմը և գիտահետազոտական աշխատանքի

նկատմամբ հետաքրքրություն ցուցաբերող ուսանողները մասնակցել են հանրապետական և միջազգային շարժունության, ծրագրերի և գիտաժողովների, սեմինարների, քննարկումների, բանավեճերի, հրատարակել են հոդվածներ, ուսումնամեթոդական ձեռնարկներ, մենագրություն, ժողովածու: Կարևոր է նաև այն հանգամանքը, որ հղման բարձր գործակից ունեցող գիտական պարբերականներում տպագրվել է 4 հոդված: Ֆակուլտետում կրթական միջավարի արդիականացման ուղղությամբ վերանայվել և բարելավվել են բակալավրիատի և մագիստրատուրայի ծրագրերը: Որակի ապահովման բաժնի կողմից իրականացված հարցումների վերլուծությունը ցույց է տվել, որ դասավանդման որակի և ուսումնառության մեթոդների արդյունավետության առումով ուսանողների բավարարվածության աճ է նկատվել: Նպատակային աշխատանքներ են տարվել ուսանողների, ուսանողական ինքնակառավարման մարմինների հետ: Ուսանողների ներուժը օգտագործվել է բուհ-դպրոց կապն ուժեղացնելու նպատակով:

Թ.Ասոյանը ներկայացրեց նաև այն աշխատանքները, որոնք տարվել են արտաքին կապերի և համագործակցության ուղղությամբ և պրոֆեսորադասախոսական անձնակազմի հետ:

Զեկուցողն այնուհետև հանգամանորեն ներկայացրեց 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններն ըստ բուհի գործունեության տարբեր ոլորտների:

ՈՐՈՇԵՑԻՆ-1.ԳՊՀ ՀՄ ֆակուլտետի դեկան Թ.Ասոյանի հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2.Հավանություն տալ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի՝ 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին:

ԼՍԵՑԻՆ- ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանի զեկուցումը ԳՊՀ ուսանողների պրակտիկաների կազմակերպման ընթացքի և արդյունավետության վերաբերյալ հարցման արդյունքների մասին: Զեկուցողը նշեց, որ պրակտիկաները կարևոր նշանակություն ունեն տեսական գիտելիքները գործնականում ստուգելու և կիրառելու համար: Պրակտիկաների կազմակերպման և անցկացման համար շատ կարևոր են դրանց ժամանակացույցի կազմման, անցկացման ձևերի, հսկողության իրականացման գործընթացների ճիշտ որոշարկումը: Փաստ է նաև, որ պրակտիկայի հետ կապված հարցերը ավելի շատ են հետաքրքրում ուսանողներին, ուստի անհրաժեշտություն է զգացվում ուսանողության շրջանում պարբերաբար անցկացնել հարցումներ՝ պրակտիկաների գործընթացը արդյունավետ իրականացնելու, բարելավելու նպատակով: Հարցումները ցույց են տալիս, որ ուսանողները հիմնականում բավարարված են պրակտիկաների գործընթացից, սակայն կա նաև որոշակի անբավարարվածություն՝ կապված պրակտիկայի տևողության և անցկացման ժամանակահատվածի հետ: Այս հարցադրումները պահանջում են այնպիսի լուծումներ, որոնք չպիտի ազդեն ուսումնական գործընթացի վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1. ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

2. ԳՊՀ ուսանողների պրակտիկաների կազմակերպման ընթացքի և արդյունավետության վերաբերյալ հարցման արդյունքները հղել ամբիոններին և դեկանատներին՝ քննարկելու և միջոցառումներ իրականացնելու համար:

ԼՍԵՑԻՆ-ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի անցկացման ուղղությամբ կատարված աշխատանքների և ժամանակացույցի վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ մասնագիտական կրթական ծրագրերի բարեփոխումները անընդհատական բնույթ են կրում, սակայն պետք է նաև ժամանակ առ ժամանակ անցկացնել աուդիտ՝ ընդ որում այդ գործընթացում ներառելով արտաքին փորձագետների: Արդեն աշխատանքներ են տարվում կրթական ծրագրերի բարելավման ուղղությամբ: Աշխատանքները արդյունավետորեն իրականացնելու համար անհրաժեշտ է ժամանակացույց: Ն.Կուտուզյանը ներկայացրեց ներքին աուդիտի անցկացման ժամանակացույցն ըստ ՄԿԾ-ների և առաջարկեց քննարկել ու հաստատել այն:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի անցկացման հետևյալ ժամանակացույցը.

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Դասիչ	Մասնագիտական կրթական ծրագիր
2024-2025 ուսումնական տարվա 1-ին կիսամյակ		
Բակալավրիատի կրթական ծրագիր		
1.	042101.01.6	Իրավագիտություն
2.	061103.01.6	Համակարգչային ճարտարագիտություն
Մագիստրատուրայի կրթական ծրագիր		
3.	042101.01.7	Իրավագիտություն
4.	061103.01.7	Համակարգչային ճարտարագիտություն
2024-2025 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակ		

Բակալավրիատի կրթական ծրագիր		
5.	011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
6.	011401.18.6	Պատմություն
7.	041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/
8.	031101.01.6	Տնտեսագիտություն
Մագիստրատուրայի կրթական ծրագիր		
9.	011301.01.7	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա
10.	011401.18.7	Պատմություն
11.	041101.01.7	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/
12.	031101.01.7	Տնտեսագիտություն
2025-2026 ուսումնական տարվա 1-ին կիսամյակ		
Բակալավրիատ կրթական ծրագիր		
13.	011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն
14.	011401.19.6	Հայոց լեզու և գրականություն
15.	011401.01.6	Կենսաբանություն
16.	041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի/
17.	101801.01.6	Սերվիս
Մագիստրատուրայի կրթական ծրագիր		
18.	011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն
19.	011401.19.7	Հայոց լեզու և գրականություն
20.	041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ
21.	011401.01.7	Կենսաբանություն
2025-2026 ուսումնական տարվա 2-րդ կիսամյակ		
Բակալավրիատի կրթական ծրագիր		
22.	011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն
23.	053101.02.6	Դեղագործական քիմիա
24.	011401.03.6	Աշխարհագրություն
25.	052201.01.6	Բնապահպանություն և բնօգտագործում
26.	054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ
Մագիստրատուրայի կրթական ծրագիր		
27.	011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն

28.	011401.03.7	Աշխարհագրություն
29.	052201.01.7	Բնապահպանություն և բնօգտագործում

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **07. 12. 2024թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 22-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1. ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության հաշվետվության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ:

/զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

2. ԳՊՀ 2023-2024 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ :

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտ. գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

3. ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի մասնագիտական կրթական ծրագրերի հեռակա բաժինների 2025-2029թթ. ուսումնական պլանների քննարկման և հաստատման մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

4. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ- ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանի զեկուցումը ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2023-2024 ուսումնական տարվա գործունեության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Զեկուցողն ասաց, որ հաշվետու ուստարում համալսարանում իրականացվող գործընթացների ՊԻԳԲ շրջափուլն ապահովելու նպատակով ՈԱԲ-ն համագործակցել է ներքին և արտաքին շահակիցների հետ: Բաժինը բուհում իրականացվող բոլոր գործընթացների որակիապահովմանը միտված արժանահավատ տվյալների հավաքման նպատակով կիրառել է տարբեր գործիքակազմեր՝ հարցումներ, նպատակային հանդիպումներ ու քննարկումներ, դասալսումներ, մշտադիտարկումներ, վերլուծություններ, հաշվետվություններ և այլն: Որոշ հացաթերթեր վերանայվել և բարեփոխվել են, գործածության մեջ են դրվել նոր հարցաթերթեր:

Ք.Հայրապետյանը առանձին-առանձին հանգամանորեն ներկայացրեց նշված գործիքակազմերը:

Զեկուցման վերջում ներկայացվեցին 2024-2025 ուստարվա զարգացման ուղղություններն ըստ ոլորտների:

ՈՐՈՇԵՑԻՆ- ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքը գնահատել բավարար:

2. Հաստատել ԳՊՀ որակի ապահովման բաժնի 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ 2023-2024 ուստարվա ուսումնագիտական գործունեության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Զեկուցողն ասաց, որ 2023-2024 ուստարում համալսարանում իրականացվել է արդյունահեն աշխատանք զարգացման տարբեր ուղղություններով, ապահովվել է թափանցիկ հաշվետվողականության, ակադեմիական ազնվության, ուսանողակենտրոն մոտեցումների, հանրային պատասխանատվության սկզբունքների իրացումը: Այնուհետև ներկայացվեցին ուսանողական համակազմի համալրման ցուցանիշները՝ ըստ կրթական աստիճանների և ուսուցման եղանակների՝ ընդունելություն, տեղափոխություններ, վերականգնումներ և այլն՝ համեմատականներ անցկացնելով նախորդ տարվա ցուցանիշների հետ: Նույն կերպ ներկայացվեցին քննաշրջանների արդյունքներն ըստ ֆակուլտետների:

Ն.Կուտուզյանը հանգամանորեն ներկայացրեց 2023-2024 ուսումնական տարում իրականացված աշխատանքներն ու իրականացված աշխատանքներն ըստ ԳՊՀ զարգացման ռազմավարական ուղղությունների: Նշվեցին կրթական և սոցիալ-մշակութային, գիտահետազոտական և նորարական, կառավարչական, ֆինանսատնտեսական, ռեսուրսների ապահովման, հանրային պատասխանատվության, արտաքին կապերի ընդլայնման և միջազգայնացման, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ոլորտներում կատարված աշխատանքների նպատակները, իրականացված աշխատանքները և արդյունքները: Նշվեց, որ բոլոր ոլորտներում կան իրական ձեռքբերումներ:

Ն.Կուտուզյանը 2024-2025 ուսումնական տարում ԳՊՀ ուսումնագիտական գործունեության զարգացման ռազմավարական ուղղությունները ներկայացրեց ըստ գործունեության ոլորտների համապատասխան մեկնաբանություններով:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ 2023-2024 ուստարվա ուսումնագիտական գործունեության հաշվետվությունն ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. Հաստատել ԳՊՀ ուսումնագիտական գործունեության՝ 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունները:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի մասնագիտական

կրթական ծրագրերի հեռակա բաժինների 2025-2029թթ. ուսումնական պլանների քննարկման մասին: Զեկուցողն ասաց, որ ֆակուլտետների վերակազմակերպման հետևանքով անհրաժեշտաբար փոփոխություններ են կատարվել ՄԿԾ-ներում, ուսումնական պլաններում, առարկայացանկերում, որոնք արդեն որոշակիացվել են առկա բաժինների համար: Բնականաբար փոփոխություններ և բարելավումներ պետք է կատարվեն հեռակա բաժինների ուսումնական ծրագրերում: Դեկանատներում և ամբիոններում այդ ուղղությամբ աշխատանքներ իրականացվել են, քննարկվել և արդյունքներն ամփոփվել են: Ուսպլաններն արդեն պատարաստ են, ուստի զեկուցողն առաջարկեց հաստատել դրանք:

ՈՐՈՇԵՑԻՆ-Հաստատել ԳՊՀ բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի մասնագիտական կրթական ծրագրերի հեռակա բաժինների 2025-2029թթ. ուսումնական պլանները:

Ռեկտորի պարտականությունները

ժամանակավորապես կատարող՝ Ն. Կուտուզյան

Գիտական քարտուղար՝ Թ.Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ Ն 7

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **20. 12. 2024թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1. ԳՊՀ 2023-2024 ուսումնական տարվա ֆինանսական, տնտեսատեխնիկական գործունեության հաշվետվության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյան/

2.ԳՊՀ 2023-2024 ուսումնական տարվա գործունեության ընդհանուր հաշվետվության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ:

/զեկուցող՝ ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյան/

3. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանի զեկուցումը ԳՊՀ 2023-2024 ուսումնական տարվա ֆինանսական, տնտեսատեխնիկական գործունեության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների մասին: Զեկուցողն ասաց, որ ԳՊՀ բյուջեն կազմվում է մուտքերի և ելքերի համամասնությունը պահպանելու սկզբունքով: Նա 2024 թվականի բյուջեի կատարման վերլուծությունը ներկայացրեց ըստ ԳՊՀ զարգացման հիմնական նպատակների ու խնդիրների հայեցակարգային ուղղությունների: 2024 թ. բյուջեի տոկոսային բաշխումները կատարվել են ըստ ԳՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի ոլորտների: Այնուհետև ներկայացվեցԳՊՀ 2025 թ բյուջեի նախահաշվի վերլուծությունները, ըստ որի՝ բյուջեում նախատեսված ծախսերի 47 տոկոսը բաժին է ընկնում կրթական և սոցիալ-մշակութային գործունեության ոլորտին, գիտահետազոտական և նորարական ոլորտին՝ 3 տոկոսը, կառավարչական, ֆինանսատնտեսական ոլորտին՝ 39 տոկոսը, հանրային պատասխանատվությաբ, արտաքին կապերի ընդլայնման և միջազգայնացման ոլորտին՝ 10 տոկոսը, հակակոռուպցիոն քաղաքականության իրականացման ոլորտին՝ մնացածը: Կատարվեց 2024թ. բյուջեի կատարողականի և 2025թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի վերլուծություն:

Գ. Մուրադյանն անդրադարձավ նաև ԳՊՀ 2023-2024 ուստարվա տնտեսատեխնիկական գործունեությանը: Նշվեց, որ ֆակուլտետների վերակազմակերպման հետևանքով կատարվել են տեղափոխություններ և վերադասավորումներ, որոնք իրականացվել են ֆակուլտետներում, ամբիոններում, լաբորատորիաներում, աշխատասենյակներում լրացուցիչ աշխատանքների միջոցով: Ձեռնարկվել են միջոցառումներ ԳՊՀ մասնաշենքերի ֆիզիկական պահպանության, ջեռուցման, համացանցային կապի ապահովման, տեխնիկական ապահովման և այլ ուղղություններով: Զեկուցողը ներկայացրեց նաև ուսումնական տարվա ընթացքում իրականացված գործառնությունները:

Գ.Մուրադյանը ներկայացրեց նաև 2024-2025 ուստարում ԳՊՀ ֆինանսական և տնտեսատեխնիկական գործունեության զարգացման հիմնական ուղղությունները

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանի զեկուցումը ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

2. Հավանություն տալ ԳՊՀ զարգացման 2025թ. բյուջեի նախահաշվին և 2025թ բյուջեն ներկայացնել ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի հաստատմանը:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի զեկուցումը ԳՊՀ 2023-2024 ուսումնական տարվա գործունեության ընդհանուր հաշվետվության և 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղությունների վերաբերյալ: Նա ասաց, որ բուհի որակական բնութագիրը որոշվում է այն արժեքներով և առաքելությամբ, որոնցով առաջնորդվում է: Համալսարանը հենվում է մարդասիրության, սոցիալական արդարության, ակադեմիական ազնվության, հրապարակայնության, հաշվետվողականության և այլ արժեքների վրա, իսկ առաքինի մարդու, բարեխիղճ քաղաքացու և որակյալ մասնագետի ձևավորումը համալսարանի առաքելությունն է: Նշվեց, որ ԳՊՀ-ում 2023-2024 ուստարում աշխատանքներն իրականացվել են հինգ գերակա ուղղություններով՝ հիմք ընդունելով համալսարանի 2023-2027 թթ. զարգացման ռազմավարական ծրագիրը և 2024 թ տարեկան գործողությունների պլանը: Այնուհետև Ռ.Հակոբյանը հանգամանորեն ներկայացրեց գերակա ուղղությունների առաձին ոլորտներում իրականացված աշխատանքները՝ նշելով ձեռքբերումները, բերելով համապատասխան տվյալներ:

Ռ. Հակոբյանը անդրադարձավ նաև 2024-2025 ուստարում ԳՊՀ զարգացման հիմնական ուղղություններին:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի զեկուցումը ընդունել ի գիտություն:

2. Հավանություն տալ ԳՊՀ զարգացման 2024-2025 ուստարվա զարգացման հիմնական ուղղություններին:

Գիտական խորհրդի նախագահ՝ Ռ. Հակոբյան

Գիտական քարտուղար՝ Թ. Ասոյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **25. 01. 2025թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 22-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1. ԳՊՀ առկա բաժինների ուսանողների կողմից ուսումնական ռեսուրսներից բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն:

/զեկուցող՝ ԳՊՀ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

2. ԳՊՀ հեռակա բաժինների ուսանողների կողմից դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման հարցման արդյունքների վերլուծություն:

/զեկուցող՝ ԳՊՀ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/

3. ԳՊՀ բակալավրիատի առկա ու հեռակա բաժիններում և մագիստրատուրայում «Իրավագիտություն» և «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի անցկացման գործընթացի, արտաքին փորձագետների թեկնածությունների քննարկման և հաստատման վերաբերյալ:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյան, ինքնավերլուծություններն անցկացրած աշխատանքային խմբի անդամներ/

4. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանի զեկուցումը ԳՊՀ առկա բաժինների ուսանողների կողմից ուսումնական ռեսուրսներից բավարարվածության և ԳՊՀ հեռակա բաժինների ուսանողների կողմից դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ ուսանողության շրջանում անանուն հարցումներն անցկացվել են նախապես մշակված հարցաշարով: Հարցումներին մասնակցել են համապատասխանաբար առկա և հեռակա բաժինների ուսանողների մեծ մասը: Հարցումների վերլուծությունը ցույց է տվել, որ առկա բաժնի ուսանողները բավարարված են Գավառի պետական համալսարանում առկա ուսումնական ռեսուրսներից, իսկ հեռակա բաժնի ուսանողները բարձր են գնահատել Գավառի պետական համալսարանում դասավանդման որակը, դրական են արձագանքել ուսումնական գործընթացի արդյունավետությանը վերաբերող հարցերին: Ուսանողների կողմից արվել են դիտարկումներ, ներկայացվել են առաջարկություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

2. Ուսանողների կողմից ուսումնական ռեսուրսներից բավարարվածության և ԳՊՀ հեռակա բաժինների ուսանողների կողմից դասավանդման որակի և ուսումնական գործընթացի արդյունավետության գնահատման գնահատման արդյունքները հղել ամբիոններին և դեկանատներին՝ առաջարկությունները քննարկելու և նկատված թերությունները վերացնելու միջոցառումներ իրականացնելու համար:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ բակալավրիատի առկա ու հեռակա բաժիններում և մագիստրատուրայում «Իրավագիտություն» և «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի անցկացման գործընթացի, արտաքին փորձագետների թեկնածությունների մասին: Նա ասաց, որ գիտխորհրդի նախորդ նիստերում քննարկվել են ՄԿԾ-ների ներքին աուդիտ անցկացնելու մասին հարցերը՝ այդ գործընթացում ներգրավելով արտաքին փորձագետների: Նշվեց, որ մեծ աշխատանքներ են տարվել նշված ՄԿԾ-ների ուղղությամբ, դրանք բարելավվել ենհամապատասխան աշխատանքային խմբերի կողմից, քննարկվել ամբիոններում: Հարցի շուրջ **արտահայտվեցին** նաև աշխատանքային խմբերի անդամները, որոնք ներկայացրին կատարված աշխատանքները:

Ն.Կուտուզյանը նշեց, որ անհրաժեշտ է առաջադրել արտաքին փորձագետների թեկնածություններ:

Առաջադրվեցին հետևյալ թեկնածությունները.

1. Գեղամ Սարգսի Կարոյան՝ տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, բակալավրիատի և մագիստրատուրայի «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի համար,
2. Ռաֆիկ Հակոբի Պետրոսյան՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, բակալավրիատի և մագիստրատուրայի «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի համար:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.Հաստատել Գեղամ Սարգսի Կարոյանի և Ռաֆիկ Հակոբի Պետրոսյանի թեկնածությունները որպես արտաքին փորձագետներ համապատասխանաբար բակալավրիատի և մագիստրատուրայի «Համակարգչային ճարտարագիտություն» և «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտ անցկացնելու գործընթացում ներգրավելու համար:

2. Գեղամ Սարգսի Կարոյանի և Ռաֆիկ Հակոբի Պետրոսյանի հետ կնքել պայմանագիր՝ որպես փորձագետներ «Համակարգչային ճարտարագիտություն» և «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտ անցկացնելու գործընթացում ներգրավելու համար:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 9

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **28. 02. 2025թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 23-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1.«ԳՊՀ-ում հեռավար (առցանց) կրթության կազմակերպման կարգ»-ի փոփոխությունների նախագծի վերաբերյալ:

(զեկուցող՝ պրոռեկտոր Ն. Կուտուզյան)

2..«ԳՊՀ ուսանողների ուսման վարձի վճարման և փոխհատուցման կարգ»-ի փոփոխությունների նախագծի մասին:

(զեկուցողներ՝ պրոռեկտոր ՆԿուտուզյան, գլխ.հաշվապահ Գ.Մուրադյան)

3.ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում կրթական ծրագրերի ներքին աուդիտի գործընթացի քննարկման մասին:

(զեկուցողներ՝ պրոռեկտոր Ն.Կուտուզյան, ՈԱԲ վարիչ Ք.Հայրապետյան)

4. ԳՊՀ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի անցկացման արտաքին փորձագետների թեկնածությունների վերաբերյալ:

(զեկուցողներ՝ պրոռեկտոր Ն.Կուտուզյան, ինքնավերլուծության խմբի անդամներ)

5.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը «ԳՊՀ-ում հեռավար (առցանց) կրթության կազմակերպման կարգ»-ի փոփոխությունների նախագծի վերաբերյալ: Զեկուցողն ասաց, որ արդի ժամանակաշրջանում մեծացել են կրթության կազմակերպման հնարավորությունները և միջոցները, ժամանակի պահանջներին համընթաց քայլելու համար անհրաժեշտություն է առաջանում կրթական գործընթացում ներդնել և օգտագործել նոր տեխնոլոգիաներ ու գործիքակազմեր: Համավարակը ցույց տվեց, որ շատ կարևոր է կրթական գործընթացը հեռավար կազմակերպելու տեխնոլոգիաներին տիրապետելը: Գավառի պետական համալսարանում մշակվել և ներդրվել է համապատասխան Կարգ, որն արդեն լրամշակման և բարելավման կարիք ուներ: Առաջարկվող փոփոխությունները նպատակ ունեն կարգավորելու հեռավար կրթության կազմակերպման հնարավորությունները համալսարանում: Կարգը քննարկվել է համալսարանի

կառուցվածքային ստորաբաժանումներում: Արված դիտարկումները և առաջարկությունները հաշվի են առնվել Կարգը լրամշակելու ժամանակ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել «ԳՊՀ-ում հեռավար (առցանց) կրթության կազմակերպման կարգ»-ը փոփոխություններով:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի և գլխավոր հաշվապահ Գ.Մուրադյանի զեկուցումները «ԳՊՀ ուսանողների ուսման վարձի վճարման և փոխհատուցման կարգ»-ի փոփոխությունների նախագծի մասին: Նրանք ասացին, որ անհրաժեշտություն կա փոփոխություններ կատարելու նշված կարգում՝ կապված ուսանողների կարգավիճակով պայմանավորված զեղչերի կիրառման հնարավորությունների, չափերի հետ: Կարգը քննարկվել է համալսարանի կառուցվածքային ստորաբաժանումներում: Արված դիտարկումները և առաջարկությունները հաշվի են առնվել Կարգը լրամշակելու ժամանակ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել «ԳՊՀ ուսանողների ուսման վարձի վճարման և փոխհատուցման կարգ»-ը փոփոխություններով:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի և ՈԱԲ վարիչ Ք.Հայրապետյանի զեկուցումները ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնում կրթական ծրագրերի ներքին աուդիտի գործընթացի մասին: Նրանք ասացին, որ խորհրդակցությունը բավականին արդյունավետ էր և օգտակար: Այն նպատակ ուներ մասնագիտական կրթական ծրագրերը բարելավելու ուղիներ նշել՝ նրանց արդյունավետությունը և կրթության որակը բարձրացնելու համար: Շատ կարևոր է կրթական ծրագրերի ներքին աուդիտ անցկացնելը, սակայն այդ նպատակով ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքից հետո անհրաժեշտություն է գործընթացում արտաքին փորձագետների ներգրավումը, որոնց կատարած դիտարկումները հնարավորություն կտան կատարելագործելու կրթական ծրագրերը: Նշվեց, որ Գավառի պետական համալսարանում ստեղծվել է ժամանակացույց՝ կրթական ծրագրերի աուդիտ անցկացնելու համար: Արդեն ստացվել են Իրավագիտություն և Համակարգչային ճարտարագիտություն կրթական ծրագրերի վերաբերյալ արտաքին փորձագետների եզրակացությունները: Համալսարանում այդ գործընթացը շարունակական է:

ՈՐՈՇԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի և ՈԱԲ վարիչ Ք.Հայրապետյանի զեկուցումներն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի անցկացման արտաքին փորձագետների թեկնածությունների վերաբերյալ: Նա ասաց, որ գիտխորհրդի նախորդ նիստերում քննարկվել են ՄԿԾ-ների ներքին աուդիտ անցկացնելու մասին հարցերը՝ այդ գործընթացում ներգրավելով արտաքին

փորձագետների: Նշվեց, որ մեծ աշխատանքներ են տարվել նշված ՄԿԾ-ների ուղղությամբ, դրանք բարելավվել են համապատասխան աշխատանքային խմբերի կողմից, քննարկվել ամբիոններում:

Հարցի շուրջ **արտահայտվեցին** նաև աշխատանքային խմբերի անդամները, որոնք ներկայացրին կատարված աշխատանքները:

Ն.Կուտուզյանն ասաց, որ անհրաժեշտ է առաջադրել արտաքին փորձագետների թեկնածություններ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ն.Կուտուզյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 10

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **22. 03. 2025թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 24-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1.ԳՊՀ «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի արտաքին փորձագիտական եզրակացության վերաբերյալ:

(զեկուցող՝ ռեկտոր Ռ.Հակոբյան)

2.ԳՊՀ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Տնտեսագիտություն», «Հաշվապահական հ«աշվառում (ըստ ոլորտի)» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի անցկացման մասին:

(զեկուցողներ՝ պրոռեկտոր Ն.Կուտուզյան, ինքնավերլուծության խմբի անդամներ)

3.ԳՊՀ բակալավրիատում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման մասին:

(զեկուցողներ՝ դեկաններ, ՄԿԾ ղեկավարներ)

4.ԳՊՀ-ում արդի կրթական տեխնոլոգիաների կիրառման հարցերի, MIRO թվային գրատախտակի առանձնահատկությունների վերաբերյալ:

(զեկուցող՝ Լ.Թոռչյան)

5. ԳՊՀ բնագիտատնտեսական ֆակուլտետի դեկան, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Մարտին Ավագյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին:

(զեկուցող՝ գիտական քարտուղար Թ.Ասոյան)

6.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանի զեկուցումը «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի արտաքին փորձագիտական եզրակացության մասին: Նա ասաց, որ ստացվել է արտաքին փորձագետ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռաֆիկ Հակոբի Պետրոսյանի եզրակացությունը բակալավրիատի և մագիստրատուրայի «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ: Նշվեց, որ կատարվել է բարեխիղճ աշխատանք: Փորձագետը բարձր է գնահատել ԳՊՀ

«Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագիրը և ծրագրի կատարմանը միտված համալիր աշխատանքը, սակայն կատարել է նաև դիտարկումներ, որոնք նպատակ ունեն բարելավելու կրթական ծրագրերը: Ռ. Հակոբյանը ներկայացրեց և գնահատեց արված դիտարկումները:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.ԳՊՀ ռեկտոր Ռ. Հակոբյանի զեկուցումը «Իրավագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի արտաքին փորձագիտական եզրակացության մասին ընդունել ի գիտություն:

2. Ներկայացնել բարելավման ծրագիր՝ կապված արտաքին փորձագետ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռաֆիկ Հակոբի Պետրոսյանի դիտարկումները:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն. Կուտուզյանի զեկուցումը ԳՊՀ «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա», «Պատմություն», «Տնտեսագիտություն», «Հաշվապահական հաշվառում» մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտի անցկացման արտաքին փորձագետների թեկնածությունների վերաբերյալ: Նա ասաց, որ գիտխորհրդի նախորդ նիստերում քննարկվել են ՄԿԾ-ների ներքին աուդիտ անցկացնելու մասին հարցերը՝ այդ գործընթացում ներգրավելով արտաքին փորձագետների: Նշվեց, որ մեծ աշխատանքներ են տարվել նշված ՄԿԾ-ների ուղղությամբ, դրանք բարելավվել են համապատասխան աշխատանքային խմբերի կողմից, քննարկվել ամբիոններում: Հարցի շուրջ **արտահայտվեցին** նաև աշխատանքային խմբերի անդամները, որոնք ներկայացրին կատարված աշխատանքները:

Ն.Կուտուզյանն ասաց, որ անհրաժեշտ է առաջադրել արտաքին փորձագետների թեկնածություններ: Ըստ ՄԿԾ-ների՝ առաջադրվեցին հետևյալ թեկնածությունները.

1. Լուսինե Մարտունիկի Պողոսյան – Տարրական մանկավարժություն և մեթոդիկա՝ բակալավրիատ և մագիստրատուրա,
2. Ջուլիետտա Վոլոդյայի Գևորգյան – Հաշվապահական հաշվառում և հարկում/ըստ ոլորտի/՝ բակալավրիատ, Հաշվապահական հաշվառում/ըստ ճյուղերի/՝ մագիստրատուրա,
3. Մարե Վահանի Խաչատրյան – Տնտեսագիտություն՝ բակալավրիատ և մագիստրատուրա,
4. Համո Կարենի Սուքիասյան – Պատմություն՝ բակալավրատ և մագիստրատուրա:

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել առաջադրված թեկնածությունները մասնագիտական կրթական ծրագրերի ներքին աուդիտ անցկացնելու գործընթացում որպես արտաքին փորձագետներ ներգրավելու համար:

1. Լուսինե Մարտունիկի Պողոսյան – Տարրական մանկավարժություն և մեթոդիկա՝ բակալավրիատ և մագիստրատուրա,

2. Ջուլիետտա Վոլոդյայի Գևորգյան – Հաշվապահական հաշվառում և հարկում/ըստ ոլորտի/՝ բակալավրիատ, Հաշվապահական հաշվառում/ըստ ճյուղերի/՝ մագիստրատուրա,
3. Մարե Վահանի Խաչատրյան – Տնտեսագիտություն՝ բակալավրիատ և մագիստրատուրա,
4. Համո Կարենի Սուքիասյան – Պատմություն՝ բակալավրատ և մագիստրատուրա:
Վերոնշյալ անձանց հետ կնքել պայմանագրեր՝ ՄԿԾ-ների արտաքին փորձաքննություն իրականաացնելու վերաբերյալ:

ԼՍԵՑԻՆ-Դեկաններ Մ. Ավագյանի և Թ. Ասոյանի զեկուցումները ԳՊՀ բակալավրիատում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման մասին: Զեկուցողներն ասացին, որ ամփոփիչ ատեստավորումը շատ կարևոր գործընթաց է, որի արդյունքներով է պայմանավորված համալսարանում իրականացված կրթության որակն ու արդյունավետությունը: Այդ ուղղությամբ աշխատանքները տարվում են ամբողջ ուսումնական տարվա ընթացքում: Հսկվում է ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի կատարման ընթացքը: Դեկտեմբեր ամսվա ընթացքում ամբիոններում ղեկավարների կողմից ստուգվել են աշխատանքները, պահպանվել է դրանց կատարման վերջնաժամկետը: Ընթացքի մեջ է ատեստավորող հանձնաժողովների կազմավորման, նախագահների թեկնածուների առաջադրման գործընթացը: Աշխատանքներ են տարվում ուսանողների տվյալների ճշգրտման ուղղությամբ: Նշվեց, որ պահպանվում են համապատասխան շրջաբերականով հաստատված ժամանակացույցը:

Հարցի շուրջ արտահայտվեցին ՄԿԾ ղեկավարները:

ՈՐՈՇԵՑԻՆ- Դեկաններ Մ.Ավագյանի և Թ.Ասոյանի զեկուցումները ԳՊՀ բակալավրիատում և մագիստրատուրայում 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման գործընթացի նախապատրաստման մասին ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ- Լ.Թոռչյանի զեկուցումը ԳՊՀ-ում արդի կրթական տեխնոլոգիաների կիրառման հարցերի, MIRO թվային գրատախտակի առանձնահատկությունների մասին: Զեկուցողը, արժևորելով նորագույն տեխնոլոգիաների դերը ուսուցման գործընթացում, ասաց, որ Miro – ն առցանց գրատախտակ է, որ հնարավորություն է ընձեռում աշխատանքային խմբերին՝ համագործակցելու առցանց ռեժիմով առանց ֆիզիկական ներկայության: Այն մտագրոհի, մտքեր և գաղափարներ փոխանակելու ճկուն հարթակ է: Զեկուցման ընթացքում ներկայացվեցին Miro –ի ինտերֆեյսը, հարթակում գրանցվելու տարբերակները, հարթակից օգտվ առանձնահատկությունները և տարբեր նախագծեր մշակելու հնարավորությունները:

ՈՐՈՇԵՑԻՆ - Լ.Թոռչյանի զեկուցումն ընդունել ի գիտություն:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ գիտական քարտուղար Թ. Ասոյանի զեկուցումը բնագիտատնտեսության ֆակուլտետի դեկան, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Մարտին Պատվականի Ավագյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին: Զեկուցողը նշեց, որ Մ.Ավագյանն ունի գիտությունների դոկտորի գիտական աստիճան և Գավառի պետական համալսարանում արդեն երկար տարիներ իրականացնում է գիտամանկավարժական գործունեություն: Նա մենագրության, ուսումնամեթոդական ձեռնարկների և բազմաթիվ հոդվածների հեղինակ է, աշխատել է ԲԿԳԿ կողմից ֆինանսավորվող թեմաներն իրականացնող աշխատանքային խմբերում: Մ.Ավագյանը դիմել է ԳՊՀ գիտական խորհրդին՝ իրեն դոցենտի գիտական կոչում շնորհելու համար:

Առաջարկվեց անցկացնել փակ, գաղտնի քվեարկություն: Քվեարկությունը կազմակերպելու և անցկացնելու համար ընտրվեց հաշվիչ հանձնաժողով հետևյալ կազմով. Վ.Ավետիսյան /նախագահ/, Գ.Միրիբյան ներկայացրեց Վ.Ավետիսյանը: Նա ասաց, որ քվեարկությանը մասնակցել են գիտխորհրդի 24 անդամներ: Արդյունքը՝ կողմ՝ 24, դեմ՝ 0, անվավեր 0:

Հիմք ընդունելով անցկացված քվեարկության արդյունքները՝ Գավառի պետական համալսարանի գիտական խորհուրդը

ՈՐՈՇԵՑ- 1.Գավառի պետական համալսարանի բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի դեկան, գյուղատնտեսական գիտությունների դոկտոր Մարտին Պատվականի Ավագյանին շնորհել դոցենտի գիտական կոչում:

2 Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի՝ Մարտին Պատվականի Ավագյանին դոցենտի գիտական կոչում շնորհելու մասին որոշումը ներկայացնել ԲԿԳ կոմիտե՝ հաստատման:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **25. 04. 2025թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 22-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1.«Գավառի պետական համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի ներքին փորձաքննության իրականացման ընթացակարգ»-ի նախագծի վերաբերյալ:

/զեկուցող՝ ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն. Կուտուզյան/

2.ԳՊՀ «Հաշվապահական հաշվառում» մասնագիտական կրթական ծրագրի ատաքին փորձագիտական եզրակացության մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հ. Ղուլոյան/

3.ԳՊՀ «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի արտաքին փորձագիտական եզրակացության վերաբերյալ:

/զեկուցող՝ ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վ. Ավետիսյան/

4.«Կարգ Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման» կարգի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ պրոռեկտոր Ն.Կուտուզյան/

4.Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը .«Գավառի պետական համալսարանում մասնագիտական կրթական ծրագրերի ներքին փորձաքննության իրականացման ընթացակարգ»-ի նախագծի վերաբերյալ: Զեկուցողը նշեց, որ արդեն անհրաժեշտություն էր առաջացել Ընթացակարգն ընդունելու: Ընթացակարգում ներկայացված են դրույթներ ներքին փորձաքննության անցկացման և իրականացման վերաբերյալ: Զեկուցողն անդրադարձավ Ընթացակարգի դրույթներին՝ նշելով, որ այն քննարկվել է դեկանատներում, ամբիոններում: Առաջարկվեց հաստատել Ընթացակարգը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել մասնագիտական կրթական ծրագրերի ներքին փորձաքննության իրականացման ընթացակարգ»-ի նախագիծը:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հ. Ղուլոյանի զեկուցումը «Հաշվապահական հաշվառում» մասնագիտական կրթական ծրագրի արտաքին փորձագիտական եզրակացության մասին: Նա ասաց, որ

եզրակացությունը ներկայացվել է Ջուլիետտա Վոլոդյայի Գևորգյանի կողմից, որն իրականացրել է կրթական ծրագրի փորձագիտական ուսումնասիրությունը: Փորձագետը դրական է գնահատել աշխատանքային խմբի կատարած աշխատանքը կրթական ծրագրի շուրջ: Այնուամենայնիվ, փորձագետն արտահայտել է որոշ նկատառումներ, որոնք վերլուծաբար ներկայացրեց Հ. Ղուլոյանը: Վերջինս ասաց, որ արված դիտողությունները մեծ մասամբ ընդունելի են, և դրանք հաշվի կառնվեն կրթական ծրագիրը լրամշակելու ընթացքում:

ՈՐՈՇԵՑԻՆ- ԳՊՀ հաշվապահական հաշվառման ամբիոնի վարիչ Հ. Ղուլոյանի զեկուցումը «Հաշվապահական հաշվառում» մասնագիտական կրթական ծրագրի արտաքին փորձագիտական եզրակացության մասին ընդունել ի գիտություն:

2.Հաստատել Ջուլիետտա Վոլոդյայի Գևորգյանի ներկայացրած փորձագիտական եզրակացությունը «Հաշվապահական հաշվառում» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ:

3.Մշակել բարելավման ծրագիր՝ արտաքին փորձագիտական եզրակացության մեջ մատնանշված թերությունները վերացնելու համար:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վ. Ավետիսյանի զեկուցումը «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի արտաքին փորձագիտական եզրակացության վերաբերյալ: Նա ասաց, որ եզրակացությունը ներկայացվել է տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ Գեղամ Սարգսի Կարոյանի կողմից, որն իրականացրել է կրթական ծրագրի փորձագիտական ուսումնասիրությունը: Փորձագետը դրական է գնահատել աշխատանքային խմբի կատարած աշխատանքը կրթական ծրագրի շուրջ: Այնուամենայնիվ, փորձագետն արտահայտել է որոշ նկատառումներ, որոնք վերլուծաբար ներկայացրեց Վ.Ավետիսյանը: Մասնավորապես շատ կարևոր է հաշվի առնել այդ բնագավառում տեղի ունեցող արագ զարգացումները, արհեստական բանականության բերած դժվարությունները և հնարավորությունները: Զեկուցողն, ասաց, որ արված դիտողությունները մեծ մասամբ ընդունելի են, և դրանք հաշվի կառնվեն կրթական ծրագիրը լրամշակելու ընթացքում:

ՈՐՈՇԵՑԻՆ- ԳՊՀ ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ Վ. Ավետիսյանի զեկուցումը «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի արտաքին փորձագիտական եզրակացության վերաբերյալ ընդունել ի գիտություն:

2.Հաստատել Գեղամ Սարգսի Կարոյանի ներկայացրած փորձագիտական եզրակացությունը «Համակարգչային ճարտարագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ:

3.Մշակել և ներկայացնել բարելավման ծրագիր՝ արտաքին փորձագիտական եզրակացության մեջ մատնանշված թերությունները վերացնելու համար:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը «Կարգ Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայի ընդունելության և

ուսուցման(փոփոխություններով)» կարգի մասին: Զեկուցողը նշեց, որ արդեն անհրաժեշտություն էր առաջացել կարգը վերանայելու և թարմացնելու, կատարելու փոփոխություններ: Կարգում ներկայացված են ընդհանուր դրույթներ, մագիստրատուրայի ընդունող հանձնաժողովի աշխատանքների կազմակերպման, ընդունելության, ուսուցման վերաբերյալ բաժիններ: Զեկուցողը անդրադարձավ կատարված փոփոխություններին՝ նշելով, որ Կարգը քննարկվել է դեկանատներում, ամբիոններում: Առաջարկվեց հաստատել Կարգը փոփոխություններով:

Հիմք ընդունելով զեկուցումը՝

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել «Գավառի պետական համալսարանի մագիստրատուրայի ընդունելության և ուսուցման կարգը (փոփոխություններով)»:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 12

.

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **16. 05. 2025թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 23-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1.ԳՊՀ իրականացրած «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ արտաքին փորձագիտական եզրակացության մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Հ. Ղաջոյան/

2.ԳՊՀ իրականացրած «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ արտաքին փորձագիտական եզրակացության մասին:
/զեկուցող՝ ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Ս. Ամիրխանյանյան/

3.Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Հ. Ղաջոյանի զեկուցումը «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտական կրթական ծրագրերի վերաբերյալ արտաքին փորձագիտական եզրակացության մասին: Նա ասաց, որ եզրակացությունը ներկայացվել է մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Մարտունիկի Պողոսյանի կողմից, որն իրականացրել է կրթական ծրագրի փորձագիտական ուսումնասիրությունը: Փորձագետը դրական է գնահատել աշխատանքային խմբի կատարած աշխատանքը կրթական ծրագրի շուրջ: Այնուամենայնիվ, փորձագետն արտահայտել է որոշ նկատառումներ, որոնք վերլուծաբար ներկայացրեց Հ.Ղաջոյանը: Ըստ նրա՝ շատ կարևոր է հաշվի առնել մատաղ սերնդի հետ տարվող աշխատանքների առանձնահատուկ բնույթը՝ կրթական ծրագրով, նոր իրողություններին համապատասխան, ուսուցման արդյունավետությունը բարձրացնելու ուղիների որոնման առումով: Զեկուցողն ասաց, որ արված դիտողությունները մեծ մասամբ ընդունելի են, և դրանք հաշվի կառնվեն կրթական ծրագիրը լրամշակելու ընթացքում:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հ.Ղաջոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, հաստատել փորձագետ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Մարտունիկի Պողոսյանի եզրակացությունը «Տարրական կրթության

մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ:

2 Հիմք ընդունելով փորձագետ Լ.Պողոսյանի դիտողությունները «Տարրական կրթության մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ՝ ներկայացնել բարելավման ծրագիր:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ կառավարման և ֆինանսների ամբիոնի վարիչ Ս. Ամիրխանյանյանի զեկուցումը «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ արտաքին փորձագիտական եզրակացության մասին: Զեկուցողը նշեց, որ եզրակացությունը ներկայացվել է Մարե Վահանի Խաչատրյանի կողմից: Իրականացվել է կրթական ծրագրի մանրակրկիտ ուսումնասիրություն: Փորձագետը դրական գնահատական է տվել կատարված աշխատանքին, միաժամանակ կատարել է որոշ դիտողություններ, որոնք զեկուցողը ներկայացրեց համապատասխան մեկնաբանություններով: Դրանք կներառվեն բարելավման ծրագրում և հաշվի կառնվել կրթական ծրագրի լավարկման ժամանակ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Ս.Ամիրխանյանի զեկուցումն ընդունել ի գիտություն և հաստատել արտաքին փորձագետ Մ. Խաչատրյանի եզրակացությունը «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ:

2 Հիմք ընդունելով փորձագետ Մարե Վահանի Խաչատրյանի դիտողությունները «Տնտեսագիտություն» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ՝ ներկայացնել բարելավման ծրագիր:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 13

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **29. 05. 2025թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 24-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1. 2025-2026 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ ընդունելության մագիստրատուրայի 041301.41.7-«Կանաչ տնտեսություն և կայուն զարգացում/Կառավարում/» մասնագիտությամբ 10 վճարովի տեղ՝ 450.000 /չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ տարեկան ուսման վարձաչափով, տրամադրելու մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ պրոռեկտոր ՆԿուտուզյան/

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը մագիստրատուրայի 041301.41.7-«Կանաչ տնտեսություն և կայուն զարգացում /Կառավարում/» մասնագիտությամբ ընդունելության մասին: Նա ասաց, որ նոր ժամանակներում ձևավորվում են նոր մասնագիտություններ, որոնցից մեկն էլ նշված մասնագիտությունն է: Այն կարող է լուծել տարածաշրջանային բազմաթիվ խնդիրներ:

Հարցի շուրջ **արտահայտվեց** ԲՏՖ դեկան ՄԱվագյանը: Նա ասաց, որ այդ մասնագիտությունը կարևոր նշանակություն կարող է ունենալ տարածաշրջանի առումով:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հիմք ընդունելով ԿԳՄՍ նախարարի թիվ 1217-Ա/2, 26.05.2025թ. հրամանը՝ դիմել ԿԳՄՍ նախարարին 2025-2026 ուսումնական տարվա առկա ուսուցմամբ ընդունելության մագիստրատուրայի 041301.41.7-«Կանաչ տնտեսություն և կայուն զարգացում» մասնագիտությամբ 10 վճարովի տեղ՝ 450.000 /չորս հարյուր հիսուն հազար/ ՀՀ դրամ տարեկան ուսման վարձաչափով, տրամադրելու նպատակով:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **21. 06. 2025թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1.ԳՊՀ իրականացրած «Պատմություն» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ արտաքին փորձագիտական եզրակացության մասին:

/զեկուցող՝ Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Հ. Ղաջոյան/

2.ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետում 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, հանձնաժողովների առաջարկությունների և մասնագետների պատրաստման որակի բարելավման ուղիների վերաբերյալ :

/զեկուցող՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան/

3.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների, հանձնաժողովների առաջարկությունների և մասնագետների պատրաստման որակի բարելավման միջոցների մասին:

/զեկուցող՝ ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

4.ԳՊՀ աշխատակիցների ճանապարհածախսի չափի վերանայման մասին:

/զեկուցող՝ Գ. Մուրադյան /

5.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ-Հասարակական գիտությունների ամբիոնի վարիչ Հ. Ղաջոյանի զեկուցումը «Պատմություն» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ արտաքին փորձագիտական եզրակացության մասին: Զեկուցողն ասաց, որ ստացվել է «Պատմություն» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ արտաքին փորձագետ Հ.Սուքիասյանի եզրակացությունը: Փորձագետը հանգամանորեն ուսումնասիրել է կրթական ծրագիրը և դրական է գնահատել աշխատանքային խմբի կատարած աշխատանքը, սակայն նաև արել է դիտարկումներ, որոնք վերաբերում են բացթողումներին: Հ.Ղաջոյանը եզրակացությունը ներկայացրեց՝ համեմատական անցկացնելով «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» ՄԿԾ-ի փորձագիտական եզրակացության հետ:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հ.Ղաջոյանի զեկուցումն ընդունել ի գիտություն, հաստատել փորձագետ Հ.Սուքիասյանի եզրակացությունը «Պատմություն» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ

2 Հիմք ընդունելով փորձագետ Հ.Սուքիասյանի դիտողությունները «Պատմություն» մասնագիտական կրթական ծրագրի վերաբերյալ՝ մշակել բարելավման ծրագիր:

ԼՍԵՑԻՆ- ԲՏՖ դեկան Մ. Ավագյանի զեկուցումը բնագիտատնտեսագիտական ֆակուլտետում 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին: Զեկուցողն ասաց, որ ամփոփիչ ատեստավորման գործընթացը ֆակուլտետում ընթացել է ընդունված ժամանակացույցին համապատասխան: Ամբիոնները, մագիստրոսական թեզերի, ավարտական աշխատանքների ղեկավարները աշխատել են արդյունավետ: Իրականացվել են նախապաշտպանություններ, որոնց ընթացքում ի հայտ եկած բացթողումները հետագայում լրացվել են: Հանձնաժողովների նախագահների ընտրության, ատեստավորող և բողոքարկման հանձնաժողովների ձևավորման գործընթացները նույնպես ընթացել են ըստ ժամանակացույցի: 2-րդ կիսամյակի ընթացքում աշխատանքներ են տարվել արխիվում՝ ուսանողների տվյալները, գործընթացի հետ կապված փաստաթղթերը ստուգելու և ճշգրտելու նպատակով: Ատեստավորման բուն գործընթացն իրականացվել է պատշաճ մակարդակով: Այնուհետև Մ.Ավագյանը ներկայացրեց ատեստավորման արդյունքներն ըստ բաժինների: Ուսանողները ցուցաբերել են 100 % առաջադիմություն:

Հանձնաժողովների նախագահներն ու անդամները բարձր են գնահատել ուսանողների պատրաստվածությունը, թեզերի և ավարտական աշխատանքների կատարման և ներկայացման որակը: Դրանով հանդերձ՝ նշվել է, որ պետք է շարունակել մեծ ուշադրություն դարձնել թեմաների արդիականության, ուսանողի ինքնուրույնության, նոր հրատարակված գրականության օգտագործման վրա:

ՈՐՈՇԵՑԻՆ- Մ.Ավագյանի զեկուցումը բնագիտատնտեսագիտական ֆակուլտետում 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ- ՀՄՖ դեկան Թ. Ասոյանի զեկուցումը հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին: Նա ասաց, որ ատեստավորման գործընթացն իրականացվել է սահմանված կարգի համաձայն: Ժամանակացույցով սահմանված ժամկետներում ուսանողները ավարտին են հասցրել իրենց մագիստրոսական թեզերն ու ավարտական աշխատանքները, ներկայացրել են կիսամյակային հաշվետվությունները: Արդյունքները եղել են բավարար: Հանձնաժողովների նախագահներն ու անդամները դրական կարծիքներ են արտահայտել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմաների ընտրության, կատարման որակի, ներկայացման վերաբերյալ:

Թ.Ասոյանը նշեց, որ ատեստավորմանը պատրաստվելիս շատ կարևոր է նախապաշտպանությունների դերը, որոնց ընթացքում շտկվել են աշխատանքներում առկա թերությունները: Արդյունքների ամփոփումը ցույց տվեց, որ ապահովվել է 100 % առաջադիմություն:

Ատեստավորումը կազմակերպվել և անցկացվել է պատշաճ մակարդակով, արտակարգ դեպքեր չեն գրանցվել, բողոքարկումներ չեն եղել:

ՈՐՈՇԵՑԻՆ- Թ.Ասոյանի զեկուցումը հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետում 2024-2025 ուստարվա ամփոփիչ ատեստավորման արդյունքների մասին ընդունել ի գիտություն, կատարված աշխատանքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ- ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ.Մուրադյանի զեկուցումը ԳՊՀ աշխատակիցների ճանապարհածախսի չափի վերանայման մասին: Զեկուցողը նշեց, որ Գավառի պետական համալսարանի աշխատակիցների կողմից ներկայացվել են գրավոր և բանավոր դիմումներ ճանապարհածախսն ավելացնելու խնդրանքով, ինչպես նաև Երևանից-Գավառ և հակառակ ուղղությամբ ընդհանուր նշանակության՝ հանրային տրանսպորտային միջոցների տոմսի արժեքի փոփոխություն է տեղի ունեցել՝ մի ուղղությամբ կազմելով 1000 դրամ, իսկ տաքսիների արժեքը՝ 1500 ՀՀ դրամ: Նախկինում նշված տրանսպորտային միջոցներով երթևեկելու համար տրամադրվում էր համապատասխանաբար 800 և 1000 դրամ փոխհատուցում, որն այժմ բավարար չէ Գավառ-Երևան և հակառակ ուղղությամբ, ինչպես նաև տաքսիով երթևեկելու համար: Սևանից-Գավառ և հակառակ ուղղությամբ ընդհանուր նշանակության՝ հանրային տրանսպորտային միջոցների տոմսի արժեքը կազմում է մի ուղղությամբ՝ 500 ՀՀ դրամ, մինչդեռ Սևանից Գավառ ժամանող և Գավառից Սևան մեկնող աշխատողներին որպես ճանապարհածախսի փոխհատուցում նախատեսված է 400 ՀՀ դրամ: Զեկուցողն ասաց, որ աշխատողներին տրամադրվող ճանապարհածախսի փոխհատուցման վերանայման անհրաժեշտություն է առաջացել:

Արտահայտվեցին ԳՊՀ ռեկտոր Ռ.Հակոբյանը, դեկաններ Մ.Ավագյանը, ԹԱսոյանը: Նրանք ևս փաստեցին նշված տրանսպորտային միջոցների գնային փոփոխությունները և աշխատողների դիմումների առկայությունը՝ առաջարկելով աշխատողների ճանապարհածախսի փոխհատուցման գումարի չափը հավասարեցնել ընդհանուր նշանակության՝ հանրային տրանսպորտի և տաքսի ծառայությունների վճարներին:

Ղեկավարվելով «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի առաջին պարբերությամբ, 3-րդ մասի 8-րդ կետով, «Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 54-րդ կետի 1-ին ենթակետով, հաշվի առնելով Գավառի պետական համալսարանի աշխատակիցների կողմից ներկայացված գրավոր և բանավոր դիմումները, ինչպես նաև հիմք ընդունելով ընդհանուր նշանակության՝ հանրային տրանսպորտային միջոցների և տաքսի ծառայությունների գնացուցակներում կատարված փոփոխությունները՝

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. 2025թ. հունիսի 1-ից համալսարանի ավտոբուսի՝ երթուղի դուրս չգալու օրերին Երևանից Գավառ ժամանող և Գավառից Երևան մեկնող աշխատողներին որպես ճանապարհածախսի փոխհատուցում սահմանել 1000 ՀՀ դրամ, իսկ առաջին ժամի դասին տաքսիով աշխատանքի ներկայացող դասախոսներին՝ 1500 ՀՀ դրամ:

2. ԳՊՀ ավտոբուսի շահագործման օրերին անձնական մեքենաներով աշխատանքի ներկայացող և փոխհատուցում ստացող դասախոսների ժամանելու և մեկնելու համար վճարել 1000-ական ՀՀ դրամ:

3. Սևանից Գավառ ժամանող և Գավառից Սևան մեկնող աշխատողներին որպես ճանապարհածախսի փոխհատուցում նախատեսված գումարի՝ 400 ՀՀ դրամի փոխարեն սահմանել 500 ՀՀ դրամ:

4.Հանձնարարել ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանին՝ սահմանված կարգով ապահովել ճանապարհածախսի համար սահմանված վճարների աշխատավարձին գումարումը և ընդհանուր հիմունքներով հարկումը:

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 15

Գավառի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստի

Ք. Գավառ **12. 07. 2025թ.**

Նիստին խորհրդի 31 անդամներից մասնակցում էին 21-ը:

Նախագահ՝ **Ռ. Հակոբյան**

Քարտուղար՝ **Թ. Ասոյան**

Օրակարգ՝

1.ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատի առկա բաժինների 2025-2029թթ., մագիստրատուրայի 2025-2027թթ. մասնագիտական կրթական ծրագրերի բազային ուսումնական պլանների և 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԲՏՖ դեկան Մ. Ավագյան/

2.ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի բակալավրիատի առկա բաժինների 2025-2029թթ., մագիստրատուրայի 2025-2027թթ. մասնագիտական կրթական ծրագրերի բազային ուսումնական պլանների և 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանների քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ՀՄՖ դեկան Թ. Ասոյան/

3.ԳՊՀ 2025-2026 ուստարվա ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ռեկտորի պարտականությունները ժամանակավորապես կատարող Ն. Կուտուզյան/

4.2025-2026 ուսումնական տարում ԳՊՀ հանրակացարանի ամսական վարձաչափի քննարկում և հաստատում:

/զեկուցող՝ ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյան/

5.ԳՊՀ 2026-2027 ուսումնական տարվա բակալավրիատի առկա և հեռակա բաժինների, մագիստրատուրայի ուսման վարձերը հաստատելու մասին:

/զեկուցող՝ ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյան/

6.Ընթացիկ հարցեր:

ԼՍԵՑԻՆ - ԲՏՖ դեկան Մ. Ավագյանի և ՀՄՖ դեկան Թ. Ասոյանի զեկուցումները բնագիտատնտեսագիտական և հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետների բակալավրիատի առկա բաժինների 2025-2029թթ., մագիստրատուրայի 2025-2027թթ. մասնագիտական կրթական ծրագրերի բազային ուսումնական պլանների և 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանների մասին: Նրանք նշեցին, որ ֆակուլտետների վերակազմակերպման ընթացքում կարևոր փոփոխություններ կատարվեցին թե՛ բակալավրիատի, թե՛ մագիստրատուրայի ուսպլաններում՝ կապված դասընթացների, ժամաքանակների և այլ իրողությունների օպտիմալացման հետ: Այս առումով ամբիոններում, ԱՔԲ-ում պարբերաբար կազմակերպվել են քննարկումներ բակալավրիատի և

մագիստրատուրայի մասնագիտական կրթական ծրագրերի նոր բազային ուսպլանների շուրջ՝ համապատասխանաբար 4 և 2 տարիների կտրվածքով: Միաժամանակ աշխատանքներ են տարվել 2025-2026 ուստարվա աշխատանքային պլանների ուղղությամբ: Նշված ուսպլանները պատրաստ են և ներկայացվում են հաստատման:

Հարցի մասին **ելույթ ունեցավ** ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանը: Նա նշեց, որ կատարվել է բավականին ծավալուն աշխատանք ամբիոնների կողմից: Քննարկումների ընթացքում, որոնց մասնակցել է նաև ինքը, ճշգրտվել են բազմաթիվ հարցեր: ՆԿուտուզյանն առաջարկեց առկա բաժինների բակալավրիատի և մագիստրատուրայի ուսպլանները հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ- 1.Հաստատել ԳՊՀ բնագիտատնտեսագիտական ֆակուլտետի բակալավրիատի առկա բաժինների 2025-2029թթ., մագիստրատուրայի 2025-2027թթ. մասնագիտական կրթական ծրագրերի բազային ուսումնական պլանները և 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանները:

2. Հաստատել ԳՊՀ հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետի բակալավրիատի առկա բաժինների 2025-2029թթ., մագիստրատուրայի 2025-2027թթ. մասնագիտական կրթական ծրագրերի բազային ուսումնական պլանները և 2025-2026 ուսումնական տարվա աշխատանքային պլանները:

ԼՍԵՑԻՆ – ԳՊՀ ուսումնագիտական գծով պրոռեկտոր Ն.Կուտուզյանի զեկուցումը 2025-2026 ուստարվա ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի մասին: Զեկուցողն ասաց, որ կարիք է զգացվել որոշակի փոփոխություններ կատարել ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերի սանդղակում: Փոխվել են չափանիշներ, որոնք վերաբերում են այն աշխատանքներին, որոնք վերաբերում են ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի, ինքնուրույն աշխատանքների գնահատմանը: Որպես օրինակ՝ նա նշեց, որ 1 գրախոսականի համար տրվում է 3ժամ, մագիստրոսական թեզի գրախոսման համար 3-ի փոխարեն տրվում է 4 ժամ: Փոփոխությունները կատարվել են հօգուտ աշխատակիցների:

Ն.Կուտուզյանն ասաց, որ ուսումնական աշխատանքների հաշվարկներն անելիս առաջնորդվեն հաշվարկի նոր համակարգով: Այնուհետև առաջարկվեց հաստատել ուսումնական աշխատանքների նոր հաշվարկի նորմերը:

Հարցի մասին **ելույթ ունեցավ** համալսարանի գլխավոր հաշվապահ Գ.Մուրադյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հաստատել ԳՊՀ 2025-2026 ուստարվա ուսումնական աշխատանքների հաշվարկի նորմերը:

ԼՍԵՑԻՆ – ԳՊՀ ավագ հաշվապահ Հ. Մարգարյանի զեկուցումը 2025-2026 ուսումնական տարում ԳՊՀ հանրակացարանի ամսական վարձաչափի մասին: Զեկուցողն ասաց, որ համալսարանում ապրում են ուսանողներ, որոնք կացարանի կարիք ունեն: Այդ հարաբերությունները կարգավորվում են հանրակացարանի մասին կանոնակարգով: 2024-2025 ուստարում հանրակացարանում ապրել են 10 ուսանողներ, որոնցից 6-ը՝ անվճար: Երեքն արդեն ավարտել են համալսարանը: Նշված ուստարում վարձաչափը կազմել է 25000 ՀՀ դրամ:

Հ.Մարգարյանը, նկատի ունենալով ուսանողների սոցիալական վիճակը, առաջարկեց հանրակացարանի վարձաչափը թողնել անփոփոխ՝ 25000 ՀՀ դրամ:

ՈՐՈՇԵՑԻՆ- 2025-2026 ուսումնական տարում ԳՊՀ հանրակացարանի ամսական վարձաչափը թողնել անփոփոխ՝ սահմանելով 25000 ՀՀ դրամ:

ԼՍԵՑԻՆ - ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանի զեկուցումը 2026-2027 ուսումնական տարվա բակալավրիատի առկա և հեռակա բաժինների, մագիստրատուրայի ուսման վարձերը հաստատելու մասին: Զեկուցողն ասաց, որ Գավառի պետական համալսարանը միշտ էլ հաշվի է առել տարածաշրջանի սոցիալական իրավիճակը և սահմանել է հանրապետությունում ամենացածր վարձաչափերը, սակայն ժամանակին համընթաց անհրաժեշտություն է առաջացել արձագանքելու ֆինանսատնտեսական նոր հարաբերություններին և սահմանել համապատասխանաբոր նոր վարձաչափեր 2026-2027 ուստարվա համար:

Զեկուցողը ներկայացրեց վարձաչափերում կատարված փոփոխություններն ըստ մասնագիտությունների:

ՈՐՈՇԵՑԻՆ- Հիմք ընդունելով ԳՊՀ գլխավոր հաշվապահ Գ. Մուրադյանի զեկուցումը՝ հաստատել 2026-2027 ուսումնական տարվա բակալավրիատի առկա և հեռակա բաժինների, մագիստրատուրայի ուսման վարձաչափերը:

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԸ

Դասիչ	**Մասնագիտությունը**	**Ուսման վարձը՝ հազար ՀՀ դրամ**
1	2	3
011301.00.7 Ընդհանուր մանկավարժություն		
011301.01.7	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	490
011401.00.7 Մասնագիտական մանկավարժություն		
011401.01.7	Կենսաբանություն	470
011401.03.7	Աշխարհագրություն	470
011401.18.7	Պատմություն	470
011401.19.7	Հայոց լեզու և գրականություն	470
011401.20.7	Ռուսաց լեզու և գրականություն	470
011401.21.7	Անգլերեն լեզու և գրականություն	570
031101.00.7 Տնտեսագիտություն		
031101.01.7	Տնտեսագիտություն	590
041101.00.7 **Հաշվապահական հաշվառում և հարկում**		

041101.01.7	Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	590
041201.00.7 Ֆինանսներ		
041201.01.7	Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ	590
041301.00.7 Կառավարում		
041301.41.7	Կանաչ տնտեսություն և կայուն զարգացում	490
042101.00.7 Իրավագիտություն		
042101.01.7	Իրավագիտություն	710
061103.00.7 Համակարգչային ճարտարագիտություն		
061103.01.7	Համակարգչային ճարտարագիտություն	580
052201.00.7 Բնապահպանություն և բնօգտագործում		
052201.01.7	Բնապահպանություն և բնօգտագործում	470

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԸ

դասիչ	**Մասնագիտությունը**	**Ուսման վարձը՝ հազար ՀՀ դրամ**
1	**2**	**3**
011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն		
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	470
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն		
011401.01.6	Կենսաբանություն	440
011401.03.6	Աշխարհագրություն	440
011401.18.6	Պատմություն	440
011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	450
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	440
011401.21.6	Անգլերեն լեզու և գրականություն	550
041101.00.6 Հաշվապահական հաշվառում և հարկում		
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	560
041201.00.6 Ֆինանսներ		

041201.01.6	Ֆինանսներ /ըստ ոլորտի/	560
031101.00.6 Տնտեսագիտություն		
031101.01.6	Տնտեսագիտություն	560
052201.00.6 Բնապահպանություն և բնօգտագործում		
052201.01.6	Բնապահպանություն և բնօգտագործում	440
042101.00.6 Իրավագիտություն		
042101.01.6	Իրավագիտություն	590
053101.00.6 Քիմիա		
053101.02.6	Դեղագործական քիմիա	440
054201.00.6 Աշխարհագրություն		
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ	440
061103.00.6 Համակարգչային ճարտարագիտություն		
061103.01.6	Համակարգչային ճարտարագիտություն	550
101801.00.6 Սերվիս		
101801.01.6	Սերվիս	460

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

2026/2027 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԿԱԼԱՎՐԻԱՏԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԵՐԸ

դասիչ	**Մասնագիտությունը**	**Ուսման վարձը՝ հազար ՀՀ դրամ**
1	**2**	**3**
011301.00.6 Ընդհանուր մանկավարժություն		
011301.01.6	Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	450
011401.00.6 Մասնագիտական մանկավարժություն		
011401.01.6	Կենսաբանություն	410
011401.03.6	Աշխարհագրություն	410
011401.18.6	Պատմություն	410

011401.19.6	Հայոց լեզու և գրականություն	410
011401.20.6	Ռուսաց լեզու և գրականություն	410
041101.00.6 Հաշվապահական հաշվառում և հարկում		
041101.01.6	Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	510
052201.00.6 Բնապահպանություն և բնօգտագործում		
052201.01.6	Բնապահպանություն և բնօգտագործում	410
042101.00.6 Իրավագիտություն		
042101.01.6	Իրավագիտություն	530
053101.00.6 Քիմիա		
053101.02.6	Դեղագործական քիմիա	430
054201.00.6 Աշխարհագրություն		
054201.02.6	Քարտեզագրություն և կադաստրային գործ	430
061103.00.6 Համակարգչային ճարտարագիտություն		
061103.01.6	Համակարգչային ճարտարագիտություն	450
101801.00.6 Սերվիս		
101801.01.6	Սերվիս	430

Գիտական խորհրդի նախագահ՝ **Ռ. Հակոբյան**
Գիտական քարտուղար՝ **Թ. Ասոյան**